

նաուժի հետ յիշատակուած է: Թէոտորիք և Վլըրգ-պուրկի Յովհաննէս եպիսկոպոսները աւանդութեան մը համաձայն, կը գրեն թէ ըստ քրիստոնեաներու զրոյցներուն, Անտիքրիստոսի հայրենիքը Քորազինն է (Daltz 205-206):

9. Տիւրոս եւ Սիդոն. — Այս երկու քաղաքները թէև Պաղեստինէն դուրս են, բայց սահմանակից են անոր և կը գտնուին Փիւնիկէի մէջ. ասոնց ժողովուրդը վայելած ըլլալով մեր Տիրոջ շնորհները՝ յարմար սեպեցինք անոնց քրիստոնէական աւանդութիւններն ալ կցել Ս. Երկրի աւանդութեանց:

Մարկոսի եւ Ղուկասի Աւետարաններէն (Գ. 8, Ղուկ. 2. 17) կը սորվինք թէ Քրիստոսի քարոզութեանց ժամանակ Տիւրացիներն ալ միացան անոնց որ կ'աճապարէին երթալ Գալիլիա տեսնելու Փրկիչը եւ լսելու անոր քարոզութիւնը. «Իսկ Յիսուս աչակերտօքն իւրովք գնաց ի ծովեզրն, եւ բազում ժողովուրդ ի Գալիլիացւոց երթային զհետ նորա, և ի Հըրէաստանէ և յԵրուսաղէմէ, և յայնկոյս Յորդանանու, և որք ի Տիւրոսե և ի Սիդոնե, բազում ժողովուրդ՝ իբրև լսէին՝ որչափ ինչ առնէր, գային առ նա»: Աստուծոյ խօսքին ազդեցութիւնը անոնց վրայ ծանօթ է նաև Գործք Առաքելոցի մէկ գեղեցիկ պատմուածքէն. «Եւ յայտ եղեալ Կիպրեայ, թողաք զնա ի ձախակողմն, նաւեցաք յԱսորիս, և իջաք ի Տիւրոս, քանզի անդ էր նաւն թափելոց զբեռինսն: Եւ գտեալ զաչակերտսն՝ կացաք անդ աւուրս եօթն, որք ասէինց Պաւղոս ի ձեռն Հոգւոյն, մի ելանել յԵրուսաղէմ: Եւ իբրև եղև մեզ կատարել զաւուրսն՝ ելեալ զնացաք. յուղարկեալ զմեզ ամենեցուն՝ հանդերձ կա-